

## ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (10.09.2012-06.12.2012) ԵՎ 17.12.2012-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա նիստ, ևս մեկ արտահերթ նիստ նախաձեռնել էին ՀՀ ԱԺ պատգամավորները, որը սակայն չկայացավ՝ քվորումի բացակայության պատճառով: Դեկտեմբերի 17-ին գումարվել է արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 40 հարց, որից 19-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 12-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր, 1-ը որպես ենթահարց ընդգրկում էր 16 միջազգային համաձայնագիր, 7-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր էին:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 74 հարցով, այդ թվում՝ 58 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 9 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն, 1 ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախագիծ և 8 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 13 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 114 հարցերից 99-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին և մեկը՝ ԱԺ-ի որոշման նախագիծ, որոնցից աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 36-ը (33-ը ՀՀ

կառավարության նախաձեռնություններն էին. 1-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի, 2-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած, իսկ 1-ը՝ համատեղ նախագծեր էին): Ընդունվել է նաև ԱԺ մշտական հանձնաժողովների նիստերի ժամանակացույցը հաստատող մեկ ԱԺ որոշում, քննարկվել է 8 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ամբողջությամբ ընդունված 36 օրենքներից 2-ը՝ «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» և փաթեթով քննարկված «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը մայր օրենքներ են, որոնք երկուսն էլ ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին:

Նստաշրջանի ընթացքում՝

- ՀՀ ԱԺ-ը որոշում ընդունեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգի մասին, և ձևավորվեց հաշվիչ հանձնաժողով.
- Հրապարակվեց ԱԺ-ի պատգամավոր Ռաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականի մասին դիմումը.
- ԱԺ-ը 75 կողմ և 4 դեմ ձայներով (5 քվեաթերթիկ համարվել է անվավեր) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրեց Մարտուն Գրիգորյանին.
- «Ժառանգություն» խմբակցության պատգամավորներ Ալիկ Արզումանյանը և Խաչատուր Քոքոբեյլյանը հայտարարեցին, որ այսուհետ ներկայացնելու են ազատ դեմոկրատներին՝ ֆորմալ առումով մնալով «Ժառանգություն» խմբակցության կազմում.
- Հրապարակվեց ԱԺ-ի Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի որոշումը ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի վերաբերյալ.

- ԱԺ-ը հյուրընկալեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Խորխե Օռիկոյին, որը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Ազգային ժողովը նաև՝

- քննարկեց.
  - ✓ 2011 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման Կենտրոնական բանկի հաշվետվությունը.
  - ✓ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2011թ. գործունեության մասին հաղորդումը.
  - ✓ ՀՀ վերահսկիչ պալատի 2011թ. տարեկան հաշվետվությունը.
  - ✓ Հանրային հեռուստառադիոընկերության 2010 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը.
  - ✓ Հանրային հեռուստառադիոընկերության 2011 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը
  - ✓ «Օրինաց երկիր» խմբակցության հարցապնդումը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 105.1 հոդվածի համաձայն.
  - ✓ «Հայ ազգային կոնգրես» խմբակցության հարցապնդումը և մերժեց Հարցապնդման հիման վրա ներկայացված ԱԺ որոշման նախագիծը
- հաստատեց.
  - ✓ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
  - ✓ Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը.
  - ✓ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2013 թվականի գործունեության տարեկան ծրագիրը
- համաձայնություն տվեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Մինասի Օսկանյանին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու մասին» ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրին
- ընդունեց «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեց 11 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության շրջանակներում համագործակցության, ազատ առևտրի գոտու վերաբերյալ, ենթակառուցվածքների բարելավմանը և հարկային վարչարարության արդիականացմանը միտված վարկային և այլ համաձայնագրեր:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց ՀՀ ԱԺ պատգամավորներ Աղվան Վարդանյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի, Վահան Հովհաննեսյանի և Արմեն Բաբայանի՝ հեղինակների կողմից արտահերթ համարված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 23 գրավոր և 56 բանավոր հարցով: «ՀՅԴ» խմբակցությունը 1 հարցապնդմամբ դիմել է ՀՀ կառավարությանը: Հնչել է 123 պատգամավորական հայտարարություն, որոնցից 44-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: